«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
Տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր

_____ Վ.Լ.Հարությունյան
5 մայիսի 2020թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Վահագն Գառնիկի Խաչատուրյանի «Հանրային ռեսուրսների կառավարման բարելավման հիմնական ուղիները Հայաստանի Հանրապետությունում (ընդերքի և ջրային ռեսուրսների օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Մասնակցում էին՝ Վլադիմիր Հարությունյան՝ *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ*, Տիգրան Հարությունյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ*, Քրիստինե Բաղդասարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Սվետլանա Դալլաքյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Լիլիթ Սարգսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Տաթևիկ Փարսադանյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից աշխարհում առանձնակի հրատապության խնդիր են դարձել հանրային կյանքի բոլոր բնագավառներում համակարգային փոփոխությունները: Ընդ որում, խոսքը վերաբերում է ինչպես տնտեսությանն ամբողջությամբ, այնպես էլ նրա առանձին ոլորտներին: Հատկապես մեզանում, տնտեսական հեղափոխության իրականացման պայմաններում, արմատական վերափոխումներ է պահանջում կառավարման ամբողջ համակարգը, որի նպատակն է բարձրացնել հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը, ներդնել կառավարման նոր ձևեր և

մեթոդներ:

Հայաստանի Հանրապետության համար նշված խնդիրն ավելի է կարևորվում, հաշվի առնելով գոյություն ունեցող բնական սահմանափակումները՝ տարածքը, սահմանափակ բնական ռեսուրսները, փոքր տնտեսությունը, ներքին շուկայի չափերը, դեպի ծով մուտք չունենալը և այլն: Առաջընթաց ունենալու պահանջը ստիպում է անցնել ռեսուրսների կառավարման առավել արդյունավետ համակարգի:

Ինչպես ներկայում, այնպես էլ առաջիկայում պետություն-մասնավոր գործընկերությունը դառնալու է հատկապես սահմանափակ ռեսուրսներ ունեցող երկրների համար առանցքային ուղղություն, և դրանով է մեծապես պայմանավորված են լինելու և՛ երկրի տնտեսական աճի տեմպերը, և՛ բնակչության կենսամակարդակի բարձրացումը:

Վերը նշված հարցադրումների լուծումներն, անկասկած, պահանջում են երևույթի հիմքերի համալիր հետազոտություն, այդ նպատակով տնտեսության և նրա առանձին ոլորտների վերաբերյալ վարվող տնտեսական քաղաքականության ծրագրային մոտեցումների վերլուծություն, ինչպես նաև համապատասխան լուծումների առաջադրում: Ատենախոսությունը նվիրված է այդ հիմնահարցերի հետազոտությանը, որով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ-ում հանրային ռեսուրսների կառավարման արդի հիմնախնդիրների բացահայտումն է, ինչպես նաև առաջարկությունների ներկայացումը հանրային ռեսուրսների կառավարման բարելավման ուղիների վերաբերյալ:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ հիմնախնդիրները՝

- ուսումնասիրել պետության՝ որպես հանրային հիմնական ինստիտուտ ռեսուրսի, դերի ժամանակակից ընկալումները և քննարկել պետություն և շուկայի փոխառնչությունների ինստիտուցիոնալ հիմքերը,
- դիտարկել ՀՀ տնտեսական անվտանգության հիմնախնդիրները պետություն-շուկա հարաբերությունների համատեքստում, առաջարկել և հիմնավորել տնտեսական անվտանգության որոշարկման այնպիսի մոտեցում, որը հնարավորություն կտա ներդաշնակեցնել պետության և շուկայի գործառույթները,
- ներկայացնել առաջարկի և պահանջարկի պետական կառավարման առանձնահատկությունները, դրանց դրսևորումները Հայաստանի երրորդ Հանրապետությունում,
- վերլուծել հանքարդյունաբերությունը՝ որպես հանրային ռեսուրսների առանձահատուկ ոլորտ և դիտարկել դրա ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա,

➢ վերլուծել ՀՀ ջրային ռեսուրսների օգտագործման վիճակը և բացահայտել այդ ոլորտում առկա հիմնախնդիրները,

➢ գնահատել տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը և զարգացման միտումները,

➢ բացահայտել ընդերքօգտագործման արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները և ներկայացնել առաջարկություններ,

➢ առաջարկել ջրային ռեսուրսների և համակարգերի կառավարման կատարելագործման հիմնուղիները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ուսումնասիրության արդյունքում ստացված գիտա-գործնական նշանակության ունեցող արդյունքները, որոնք պարունակում են գիտական նորույթ, կայանում են հետևյալում՝

➢ հիմնավորվել է Հայաստանի Հանրապետությունում պետություն-մասնավոր գործընկերության շրջանակների ընդլայնումը՝ հիմք ընդունելով «պետությունը գործում է այնտեղ (այն ոլորտներում), որտեղ մասնավորին ձեռնտու չէ» մոտեցումը, այդպիսով հասնելով հանրային ռեսուրսների կառավարման լավագույն հարաբերակցության ձևավորման և, որպես հետևանք՝ արդյունավետության բարձրացման,

➢ հիմնավորվել է, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում տնտեսական քաղաքականության նախապատվությունը պետք է տրվի առաջարկի տնտեսագիտությանը, ինչը կնպաստի ինչպես տնտեսական ակտիվության, այնպես էլ ներդրումային միջավայրի բարելավմանը,

➢ առաջարկվել է հանքարդյունաբերության ոլորտում կիրառել «աղտոտողը վճարում է» սկզբունքը, ինչը գործնականում նշանակում է տնօրինման ու օգտագործման տրամադրվող ընդերքի գնագոյացման հաշվարկներում ներառել նաև շրջակա միջավայրին հասցված վնասի և դրա վերականգնման հետ կապված ծախսերը՝ տնտեսական արդյունավետության և բնապահպանական հավասարակշռության պահպանման նպատակով,

➢ առաջարկվել է պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման ՀՀ ջրային օրենսգրքով նախատեսված ձևերից բացի (հավատարմագրային կառավարում, կոնցեսիա, վարձակալություն, առևտրային կազմակերպության ստեղծում, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրում) օրենսդրությանբ նախատեսել նաև նոր ձևեր՝ «կառուցում – տիրապետում – կառավարում – փոխանցում», «կառուցում – կառավարում – տիրապետում» կամ «կառուցում –

վարձակալում – տիրապետում», ինչպես նաև ջրային համակարգերի տրամադրում համայնքների՝ բաժնային մասնակցության սկզբունքով, առանց դրանցից որևէ մեկին նախապատվության իրավունք տալու՝ ապահովելով նշված ձևերի միջև ազատ մրցակցություն, ինչը որոշակի ժամանակահատվածից հետո կհանգեցնի օպտիմալ հարաբերակցության՝ ելնելով առաջարկի և պահանջարկի սկզբունքից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, կիրառման ոլորտները, ձևակերպված են հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները, տրված են հետազոտության առարկան և օբյեկտը, ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Պետության և շուկայի փոխառնչությունները հանրային ռեսուրսների կառավարման համատեքստում» գլխում ուսումնասիրվել են պետության դերի ժամանակակից ընկալումները, պետություն և շուկայի փոխառնչությունների ինստիտուցիոնալ հիմքերը, երկրի տնտեսական անվտանգությունը «պետություն-շուկա» հարաբերությունների համատեքստում:

Ատենախոսության երկրորդ՝ «Շուկայի կայացման և հանրային ռեսուրսների (ընդերքի և ջրային) կառավարման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում ներկայացվել է Հայաստանի Հանրապետության ժամանակակից տնտեսության ընդհանրական մակրոնկարագիրը, անցումային շրջանի միտումներն՝ առաջարկ-պահանջարկի ձևավորման, դրա կառավարման օրինաչափությունների ուսումնասիրման միջոցով: Ուսումնասիրվել են հանրային ռեսուրսների, մասնավորապես հանքարդյունաբերության և ջրային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրներն ու օգտագործման վիճակը:

Ատենախոսության երրորդ՝ «Հանրային ռեսուրսների՝ ընդերքօգտագործման և ջրային ռեսուրսների կառավարման կատարելագործման ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում ներկայացվել են տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը, գնահատական է տրվել զարգացման միտումներին, ինչպես նաև տրվել են հանքարդյունաբերության արդյունավետության բարձրացման և ջրային ռեսուրսների ու համակարգերի կառավարման կատարելագործման հիմնական ուղիները:

Եզրակացությունների բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքում բացահայտված հիմնախնդիրները, ամփոփ արդյունքները և դրանց լուծման ուղղությամբ հեղինակի կողմից մշակված առաջարկությունները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ատենախոսության <<1.1. Պետության դերի ժամանակակից ընկալումները>> ենթագլխում (էջ 8-27), թեև հեղինաի կողմից մանրամասնորեն և մասնագիտական բավարար մակարդակով ուսումնասիրվել և բացահայտվել են պետության դերի վերաբերյալ արդի պատկերացումները, սակայն կարծում ենք նաև, որ հեղինակի ուշադրության կենտրոնում պետք է գտնվեին նաև այն գործոնները, որոնք, հատկապես վերջին տարիների ընթացքում, էական ազդեցություն են ունեցել և առաջիկայում կարող են ունենալ պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության ժամանակ: Խոսքը վերաբերում է ոչ միայն սոցիալական բնույթի հիմնախնդիրների և դրանց լուծումների վերաբերյալ ուղիների մշակմանը, այլ նաև այնպիսի հանգամանքների հաշվառմանը, որոնք կարող են էական ազդեցություն թողնել տնտեսության և նրա ոլորտների զարգացման աճի տեմպերի ու համամասնությունների վրա: Ասվածի լավագույն ապացույցն է ներկայիս համաճարակը:

2. Ատենախոսության <<2.1. Առաջարկի և պահանջարկի ձևավորումը և դրա կառավարումը Հայաստանի Հանրապետությունում>> ենթագլխում (էջ 55-68) հեղինակը քննարկել է առաջարկի և պահանջարկի ձևավորման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում, այդ թվում կարևորելով ինչպես ամբողջական առաջարկի, այնպես էլ ամբողջական պահանջարկի վրա ազդող գործոններն ու դրանց ազդեցությունը պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության վրա:

Կարծում ենք ատենախոսը պետք է կարևորեր նաև պատմական այս կամ այն ժամանակահատվածում այն ամենաէկական գործոնները, ներառյալ՝ դրանք առաջացնող պատճառները, որոնք ամենամեծ ազդեցությունն են ունեցել ՀՀ-ում ինչպես ամբողջական առաջարկի, այնպես էլ ամբողջական պահանջարկի ձևավորման գործում: Հստակություն պետք է մտցվեր նաև հեղինակի դիրքորոշման մեջ այն հարցի շուրջ թե մոտակա ժամանակահատվածում առաջնահերթությունների ինչ մոտեցումներ պետք է լինեն թե՛ ամբողջական առաջարկի, թե՛ ամբողջական պահանջարկի, թե՛ դրանց համընթաց զարգացման և կառավարման գործիքակազմի վերաբերյալ:

3. Ատենախոսության երրորդ գլխի <<3.3. Ջրային ռեսուրսների և համակարգերի կառավարման կատարելագործումը>> ենթագլխում (էջ 141-163) հեղինակը քննարկում է Հայաստանի Հանրապետությունում ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ) և

ջրօգտագործողների ընկերությունների միությունների (ՋՕՄ) ստեղծման, ձևավորման ընթացակարգը, դրանց էվոլյուցիան, գործունեության ամբողջ ժամանակահատվածում արձանագրված թերությունները, ինչպես նաև նշում է ՋՕԸ-երի գործունեության կատարելագործման ուղղությունները:

Սակայն հեղինակը չի ներկայացնում ոռոգման համակարգի հիմնական խաղորդներից մեկի՝ ջրօգտագործողների ընկերությունների կազմակերպական-իրավական կարգավիճակի փոփոխությանը կամ նախընտրելի ձևի ընտրությանը, ինչը քննարկման առարկա է հանդիսանում ներկայումս մշակվող օրենսդրական փոփոխությունների շրջանակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության վերաբերյալ կատարված դիտողությունները չեն անդրադառնում հետազոտության գիտական արժեքի վրա և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքն ու ստացված արդյունքների նշանակությունը և բացասական ազդեցություն չեն թողնում հետազոտության ընդհանուր գնահատականի վրա:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն, այն ավարտուն հետազոտություն է, որտեղ առաջադրված հիմնախնդիրները, դրանց ուսումնասիրության մեթոդաբանությունը և իրականացված հետազոտությունները կատարված են պատշաճ մակարդակով:

Ատենախոսությունն ավարտուն գիտական հետազոտություն է, որտեղ կատարված վերլուծություններից բխող եզրահանգումների և եզրակացությունների հիման վրա արված առաջարկություններն ու հանձնարարականները, ինչպես նաև հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ ՀՀ ֆինանսների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների կողմից տնտեսության ու նրա համապատասխան ոլորտների զարգացման հեռանկարային ծրագրերի և քաղաքականության մշակման ընթացքում, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ դրանց քննարկման ժամանակ:

Վ.Գ.Խաչատուրյանի թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն կատարված, հետազոտական արժեք ունեցող աշխատանք է:

Ատենախոսության վերաբերյալ հրատարակված գիտական հոդվածները և սեղմագիրը իրենց բովանդակությամբ համապատասխանում եմ ատենախոսության բովանդակությանը:

Այսպիսով, Վահագն Գառնիկի Խաչատուրյանի *«Հանրային ռեսուրսների կառավարման բարելավման հիմնական ուղիները Հայաստանի Հանրապետությունում*

(ընդերքի և ջրային ռեսուրսների օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջների, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02. - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (5.05.2020թ., արձանագրություն թիվ 4):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ փոխտնօրեն,
գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Լ. Ն. Մարգսյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար
գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ք. Յու. Բաղդասարյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ փոխտնօրեն, տնտեսագիտության թեկնածու Լ. Ն. Մարգսյանի և նույն ինստիտուտի գիտ. քարտուղար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ք. Յու. Բաղդասարյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆ. Վ. Լ. Հարությունյան
«5» մայիսի 2020թ.